## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՅԱԼԹԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ /ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ/ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան 1 ապրիլի 2008 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «2007 թվականի մայիսի 25-ին Յալթայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների /ոստիկանության/ եւ ներքին զորքերի համար կադրերի պատրաստման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Հ. Հարությունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Քննության առարկա համաձայնագիրն Անկախ պետությունների համագոր-ծակցության մասնակից պետությունների կողմից ստորագրվել է 2007թ. մայիսի 25-ին, Յալթայում՝ նպատակ ունենալով ապահովելու Կողմերի ներքին գործերի մարմինների /ոստիկանության/ եւ ներքին զորքերի համար կադրերի պատրաստման բարձր մակարդակ, որը կպատասխանի ժամանակակից աշխարհի մարտահրավերներին եւ սպառնալիքներին:

Կողմերը կադրերի պատրաստման գործում համագործակցությունն իրականաց-նում են իրենց իրավասու մարմինների միջոցով, սույն համաձայնագրին համապատաս-խան, պահպանելով ազգային օրենսդրությունը եւ այն միջազգային պայմանագրերը, որոնց մասնակից են իրենք:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, մասնավորապես պարտավորվում է.

- կադրերի պատրաստման գործում համագործակցությունն իրականացնել իրավասու մարմինների միջոցով, որոնց ցանկը որոշվում է յուրաքանչյուր Կողմի կողմից եւ փոխանցվում ավանդապահին,

- մեկ ամսվա ընթացքում գրավոր ծանուցել ավանդապահին իրավասու մարմինների ցանկի մեջ փոփոխությունների մասին,

- կադրերի պատրաստումն իրականացնել ընդունող Կողմի ուսումնական հաստատությունների ուսումնական պլաններով եւ ծրագրերով՝ հետեւելով այն սահմանափակումներին, որոնք կապված են ընդունող Կողմի գաղտնի տեղեկատվության եւ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվության, գաղտնիության պայմանակարգի ապահովման հետ,

- որպես ընդունող Կողմ՝ ուսումնական գործընթացը կուրսանտների/ ունկնդիրների հետ համատեղ եւ առանձին կազմակերպել ռուսաց լեզվով,

- կադրերի պատրաստումն իրականացնել վճարովի հիմունքներով կամ ՀՀ կողմից սահմանվող քվոտաներով՝ արտոնյալ կամ անվճար հիմունքով, ինչպես նաեւ կատարել արտոնյալ հիմունքով կադրերի պատրաստման ժամանակ ուսուցման ծախսերը:

3. Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այն իրավունքներն ու պարտա-վորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված այլ միջազգային պայմանա-գրերից:

4. Համաձայնագիրը նախատեսում է վերջինիս դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի լուծման, տեղեկատվության փոխանակման, ինչպես նաեւ ուժի մեջ մտնելու եւ գործողության դադարեցման կարգն ու ժամկետները:

Համաձայնագրի դրույթները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաև կարևոր իրավական երաշխիք են ստեղծում ՀՀ Սահմանադրության 39 հոդվածում ամրագրված իրավունքի իրացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2007 թվականի մայիսի 25-ին Յալթայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների /ոստիկանության/ եւ ներքին զորքերի համար կադրերի պատրաստման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1 ապրիլի 2008 թվականի
ՍԴՈ-742